ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.04.2020թ. թիվ 26/26-1/6181-2020 գրությամբ «Շին-Տեխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 21.04.2020թ. թիվ 01/61-6761 գրության հիման վրա, 27.04.2020թ. թիվ 26/26-1/6181-2020 գրությամբ նախաձեռնել է «Շին-Տեխ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Շին-Տեխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկներն և դիրքորոշումը.</u>

«Շին-Տեխ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը

կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/92 ընթացակարգի շրջանակներում 06.05.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.04.2020թ. թիվ 01/61-6761 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 03.02.2020թ. հայտարարվել է ԵՔ-ԲՄԾՁԲ-20/18 ծածկագրով «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռբերման բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Շին-Տեխ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Շին-Տեխ» ՍՊԸ-ն:

Անգործության ժամկետի ավարտից հետո 03.04.2020թ. Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՔ-ԲՄԾՁԲ-20/18 ծածկագրով «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Պատվիրատուն խնդրել է վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/92 ընթացակարգի

շրջանակներում 06.05.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԾՁԲ-20/18 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շին-Տեխ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.03.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից է հայտարարում «Շին-Տեխ» ՍՊԸ-ին:

3. Նույն արձանագրությամբ որոշել է ընտրված մասնակցին ներկայացնել «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2020թ. թիվ 26/26-1/6181-

2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 21.04.2020թ. թիվ 01/61-6761 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Ընթացակարգի հրավերի 10-րդ կետի 10.1-րդ և 10.2-րդ ենթակետերի համաձայն՝

10.1 ***Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10,*** իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, ***ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ:*** Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

10.2 Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման

ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով:

Երևանի քաղաքապետարանի կողմից «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԾՁԲ-20/18 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շին-Տեխ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.03.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից է հայտարարում «Շին-Տեխ» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրությամբ որոշել է ընտրված մասնակցին ներկայացնել «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում**, ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշվել է «Շին-Տեխ» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից, ներկայացնել պայմանագիր կնքելու

առաջարկ, իսկ արդեն 4 օր հետո՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ պայմանագրի կնքման նպատակով Ընկերությանը չի տրամադրվել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 աշխատանքային օր ժամկետ, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Ընկերության՝ որպես ընտրված մասնակից, պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը: Հետևաբար գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.04.2020թ. թիվ 26/26-1/6181-2020 գրությամբ «Շին-Տեխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**